«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

10 հունիսի, 2022 թ. N 18 - Լ

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 14.16.26 և 18.7 կետերը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թ. հունիսի 23-ից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2022թ. հունիսի 10-ի N 18 - Լ որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ 4
2. Հարկային հարցերի հանձնաժողովի գործառույթները..... 4
3. Հարկային հարցերի հանձնաժողովի կազմավորման կարգը 5
4. Հարկային հարցերի հանձնաժողովի նիստերը 6
5. Հարկային հարցերի հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները..... 7
6. Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները..... 7
7. Հարկային հարցերի հանձնաժողովի ծրագիրը և հաշվետվողականությունը 8
8. Հարկային հարցերի հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը 8

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կանոնադրությունը մշակվել է ի կատարումն «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.26 և 18.7 կետերի պահանջների:

1.2 Սույն կանոնադրությամբ սահմանվում են Պալատի հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Հարկային հարցերի հանձնաժողով) կարգավիճակը, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ձևավորման ու գործունեության կարգը:

1.3 Հարկային հարցերի հանձնաժողովը մշտական գործող մասնագիտական մարմին է:

1.4 Հարկային հարցերի հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Պալատի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և Պալատի համապատասխան ներքին այլ իրավական ակտերով:

1.5 Հարկային հարցերի հանձնաժողովի լրիվ անվանումն է՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողով», կրճատ անվանումը՝ «ՀԱՊ հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողով»:

1.6 Հարկային հարցերի հանձնաժողովը հաշվետու է Պալատի խորհրդին:

1.7 Հարկային հարցերի հանձնաժողովը կարող է ունենալ իր անվանմամբ հայերենով, ռուսերենով և անգլերենով ձևաթղթեր և/կամ անհատականացման այլ միջոցներ:

1.8 Հարկային հարցերի հանձնաժողովի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական հիմունքներով և անվարձահատույց:

2. Հարկային հարցերի հանձնաժողովի գործառույթները

2.1 Հարկային հարցերի հանձնաժողովի հիմնական գործառույթներն են.

2.1.1 ՀՀ պետական մարմինների կողմից մշակված հարկային, մաքսային, ինչպես նաև աշխատանքային և քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությանն առնչվողհարցերի վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում,

2.1.2 ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեում գործող, համապատասխանաբար՝ «Եկամուտների քաղաքականության ընդլայնված խորհրդի» և «Եկամուտների

վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի» նիստերում քննարկվող հարցերի և (կամ) իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և համապատասխան առաջարկությունների ներկայացում՝ ինչպես գրավոր, այնպես էլ նիստերին մասնակցության միջոցով:

2.1.3 Աշխատաժողովների, կոնֆերանսների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում՝ կապված հարկային և Պալատի անդամների մասնագիտական գործունեությանն առնչվող իրավական այլ հարցերի հետ.

2.1.4 Հարկային և Պալատի անդամների մասնագիտական գործունեությանն առնչվող իրավական այլ հարցերինվերաբերող շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների նախաձեռնում.

2.1.5 Պալատի խորհրդի հանձնարարությամբ և Պալատի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթների իրականացում:

2.2 Բացի 2.1 կետում նշված հիմնական գործառույթներից, Հարկային հարցերի հանձնաժողովը կարող է իրականացնել նաև հետևյալ գործառույթները.

2.2.1 Օժանդակել Պալատի հատուկ և մասնագիտական մյուս հանձնաժողովների և Պալատի աշխատակազմի կողմից Պալատի անդամների հետ փոխադարձ կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումների մշակմանը և իրականացմանը.

2.2.2 Գործնական կապեր հաստատել և համագործակցել արտերկրի համանման կառույցների համապատասխան հանձնաժողովների կամ այլ մարմինների հետ.

2.2.3 Գործնական կապեր հաստատել և իր գործառույթների մասով համագործակցել պետական մարմինների, ինչպես նաև հասարակական այլ կազմակերպությունների համապատասխան մասնագետների, ստորաբաժանումների հետ:

3. Հարկային հարցերի հանձնաժողովի կազմավորման կարգը

3.1 Հարկային հարցերի հանձնաժողովի անդամ կարող են լինել միայն Պալատի անդամ աուդիտորները և փորձագետ հաշվապահները:

3.2 Հարկային հարցերի հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից:

3.3 Հարկային հարցերի հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահը, նշանակվում են Պալատի խորհրդի կողմից՝ 4 տարի պաշտոնավարման ժամկետով:

3.4 Պալատի խորհրդի կողմից նախապես նշանակվում է Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահը:

3.5 Պալատի աշխատակազմն էլեկտրոնային փոստի և/կամ Պալատի պաշտոնական կայքի միջոցով հայտարարություն է տարածում Հարկային հարցերի հանձնաժողովի անդամների թեկնածուների ներգրավման վերաբերյալ:

3.6 Հարկային հարցերի հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել հարկերի և/կամ հաշվապահական հաշվառման և/կամ աուդիտորական գործունեության և/կամ մասնագիտությանն առնչվող ոլորտային գործունեության հետ կապված առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող անձը:

3.7 Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահն ուսումնասիրում է Պալատի աշխատակազմի կողմից իրեն ներկայացված Հարկային հարցերի հանձնաժողովի կազմում ներգրավվելու հետաքրքրություն ունեցող թեկնածուների ցանկը և ընտրում անհրաժեշտ թվով անդամների: Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ Պալատի խորհուրդը նշանակում է անհրաժեշտ թվով Հարկային հարցերի հանձնաժողովի անդամներին: Խորհուրդը, Հարկային հարցերի հանձնաժողովի անդամներ ընտրելիս, հաշվի է առնում թեկնածուների մասնագիտական փորձառությունն ու գիտելիքները:

3.8 Այն դեպքում, երբ Հարկային հարցերի հանձնաժողովի որևէ անդամի պաշտոնավարումը վաղաժամկետ դադարում է, ապա սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակվում է Հարկային հարցերի հանձնաժողովի նոր անդամ՝ նախորդ (պաշտոնավարումը դադարած) անդամի համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար:

4. Հարկային հարցերի հանձնաժողովի նիստերը

4.1 Հարկային հարցերի հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստեր գումարելու միջոցով:

4.2 Հարկային հարցերի հանձնաժողովի նիստը հրավիրվում է Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ կամ Հարկային հարցերի հանձնաժողովի անդամների կեսից ավելիի նախաձեռնությամբ: Նիստերի արդյունքներն արձանագրվում են: Նիստերը նախագահում է Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նիստին ներկա անդամներից տարիքով ավագը:

4.3 Հարկային հարցերի հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի անդամների համատեղ հավաքի ձևով՝ կա'մ ֆիզիկապես մասնակցությամբ, կա'մ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

4.4 Հարկային հարցերի հանձնաժողովում քվորումն առկա է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

4.5 Հարկային հարցերի հանձնաժողովը որոշումներն ընդունում է հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

5. Հարկային հարցերի հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները

5.1 Հարկային հարցերի հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն.

5.1.1 մասնակցել Հարկային հարցերի հանձնաժողովի նիստերում ընդունվող որոշումների քվեարկությանը.

5.1.2 ներկայացնել հարցեր Հարկային հարցերի հանձնաժողովի նիստերում քննարկելու համար.

5.1.3 արտահայտել տեսակետ Հարկային հարցերի հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ.

5.1.4 Հարկային հարցերի հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ ստանալ տեղեկատվություն Պալատի այլ մարմիններից և աշխատակիցներից:

5.2 Հարկային հարցերի հանձնաժողովի անդամները պարտավոր են.

5.2.1 մասնակցել Հարկային հարցերի հանձնաժողովի նիստերին: Եթե Հարկային հարցերի հանձնաժողովի անդամը որևէ պատճառով չի կարող ներկա գտնվել նիստին, պետք է այդ մասին նախապես տեղեկացնի Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահին.

5.2.2 սահմանված ժամկետներում իրականացնել իրենց հանձնարարված աշխատանքները:

5.3 Հարկային հարցերի հանձնաժողովի անդամներն իրավասու չեն իրենց լիազորությունները փոխանցել այլ անձանց:

5.4 Եթե Հարկային հարցերի հանձնաժողովի անդամն անհարգելի պատճառներով բացակայում է անընդմեջ երեքից ավելի նիստերից կամ մեկ տարվա ընթացքում անցկացված նիստերի ընդհանուր թվի կեսից ավելիից, ապա Հարկային հարցերի հանձնաժողովը նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կարող է որոշում ընդունել դիմելուՊալատի խորհրդին՝ տվյալ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և փոխարենը նոր անդամ նշանակելու հարցով:

6. Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները

6.1 Հարկային հարցերի հանձնաժողովի գործունեությունը կազմակերպում է Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահը:

6.2 Հարկային հարցերի հանձնաժողովի նախագահը.

6.2.1 կազմակերպում և ղեկավարում է Հարկային հարցերի հանձնաժողովի ընթացիկ աշխատանքը.

6.2.2 ապահովում է Հարկային հարցերի հանձնաժողովի առջև դրված խնդիրների պատշաճ և ժամանակին կատարումը.

6.2.3 բաշխում է պարտականությունները Հարկային հարցերի հանձնաժողովի անդամների միջև և նրանց տալիս է հանձնարարականներ.

6.2.4 որոշում է Հարկային հարցերի հանձնաժողովի նիստի օրակարգը, անցկացման ձևը, ամսաթիվը, ժամանակը և վայրը.

6.2.5 հրավիրում և անցկացնում է Հարկային հարցերի հանձնաժողովի նիստերը և նախագահում է դրանք.

6.2.6 ապահովում է նիստերի արձանագրությունների վարումը, պահպանումը.

6.2.7 Պալատի խորհրդին զեկուցում է Հարկային հարցերի հանձնաժողովի տարեկան ծրագրի և տարեկան գործունեության մասին հաշվետվության վերաբերյալ.

6.2.8 որոշումներ է կայացնում փորձագետ ներգրավելու վերաբերյալ՝ ըստ անհրաժեշտության:

7. Հարկային հարցերի հանձնաժողովի ծրագիրը և հաշվետվողականությունը

7.1 Հարկային հարցերի հանձնաժողովը կազմում է իր գործունեության տարեկան ծրագիրը, որը ներկայացնում է Պալատի խորհրդի հաստատմանը՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան նախորդող տարվա նոյեմբերի 15-ը, իսկ նոր կազմավորված հանձնաժողովը՝ կազմավորումից հետո երկամսյա ժամկետում:

7.2 Հարկային հարցերի հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 31-ը Պալատի խորհրդին է ներկայացնում նախորդ տարվա իր գործունեության մասին հաշվետվությունը:

8. Հարկային հարցերի հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը

8.1 Հարկային հարցերիհանձնաժողովի նյութատեխնիկական ապահովումը և նրան անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը կատարվում է Պալատի խորհրդի որոշմամբ՝ Հարկային հարցերի հանձնաժողովի կողմից կազմված և Պալատի խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի և դրա իրականացման նպատակով նախատեսված նախահաշիվների համաձայն: